Հավելված N 5
ՀՀ կառավարության 2014 թվականի
հունվարի 30-ի N 145 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՆԱՄՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՏԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

1. Ընտանիքի՝ անասնապահությունից ստացվող եկամուտը հաշվարկվում է ընտանիքի տնօրինած անասնատեսակի և դրա քանակի մասին դիմողի դիմում-հայտարարագրում և համայնքում անասնահամաճարակային միջոցառումներ իրականացնող անասնաբույժի կամ համայնքի անասնաբուժական ծառայություն իրականացնող անձի (այսուհետ՝ անասնաբույժ) կողմից քաղաքացուն տրամադրված տեղեկանքում՝ համաձայն ձևի, առկա տվյալների հիման վրա: Ընդ որում, քաղաքային բնակավայրերի բազմաբնակարան շենքերում բնակվող՝ որևէ անասնատեսակ չտնօրինող ընտանիքը դրա մասին հայտնում է (հայտարարություն է տալիս)՝ նշում կատարելով տեղեկանք-հայտարարագրի համապատասխան բաժնում:

2. Անասնաբույժը տրամադրվող տեղեկանքում ներառում է տեղեկանքի տրամադրման օրվա դրությամբ տվյալ ընտանիքի կողմից տնօրինվող անասնատեսակները և դրանց քանակը:

3. Անասնաբույժը հաշվառում է իր տրամադրած տեղեկանքները՝ ըստ ընտանիքների և տեղեկանքների տրամադրման ժամկետի: Տեղեկանքի տրամադրման ամսվան հաջորդող 12 ամսվա ընթացքում տվյալ ընտանիքի կողմից ներկայացված անասնագլխաքանակի շարժի մասին տեղեկատվությունն անասնաբույժը պաշտոնապես տրամադրում է համապատասխան տարածքային կենտրոնին՝ ներկայացված տեղեկատվությունը հաշվառելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Եթե ընտանիքը տնօրինում է մեկ անասնատեսակ, ապա անասնապահությունից ընտանիքների ստացվող եկամուտն ընտանիքի միջին ամսական ամբողջական եկամտի մեջ չի հաշվարկվում, եթե ընտանիքը տնօրինում է մինչև՝

1) 1 կով, կամ՝

2) 1 այլ սեռահասակային խմբերի տավար, կամ՝

3) 1 գոմշամատակ, կամ՝

4) 1 խոզամայր (խոճկորներով), կամ՝

5) 3 այլ սեռահասակային խմբերի խոզեր, կամ՝

6) 4 ոչխար (կամ այծ), կամ՝

7) 36 հավ, կամ՝

8) 37 բադ (կամ սագ), կամ՝

9) 1 ջայլամ, կամ՝

10) 18 հնդկահավ, կամ՝

11) 13 մեղվաընտանիք:

5. Եթե ընտանիքը տնօրինում է մեկից ավելի անասնատեսակ կամ սույն կարգի 4-րդ կետով սահմանված անասնագլխաքանակից ավելի, ապա անասնապահությունից ընտանիքի ստացվող ամսական եկամուտը հաշվարկվում է համաձայն աղյուսակի՝ 150000 դրամը գերազանցող գումարի մեկ տասներկուերորդի (1/12-ի) չափով:

Աղյուսակ

NN ը/կ	Անասնատեսակը	Տարեկան եկամուտը (դրամ)
1.	Կով	120000
2.	Այլ սեռահասակային խմբերի տավար	90000
3.	Գոմշամատակ	150000
4.	Խոզամայր (խոճկորներով)	90000
5.	Այլ սեռահասակային խմբերի խոզեր	32500
6.	Ոչխար, այծ	30000
7.	Հավ	3300
8.	Բադ, սագ	3200
9.	Ջայլամ	120000
10.	Հնդկահավ	6650
11.	Մեղվաընտանիք	9000

6. Սեփականության կամ վարձակալության իրավունքով մշակվող գյուղատնտեսական նշանակության հողից ստացվող եկամտի հաշվարկը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած՝ Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական և բնակավայրային հողերի կադաստրային զուտ եկամտի չափերի հիման վրա:

7. Ընտանիքի՝ հողօգտագործումից ստացվող եկամուտը հաշվարկվում է ընտանիքին սեփականության կամ վարձակալության իրավունքով պատկանող՝ գյուղատնտեսական նշանակության հողամասի հողատեսքի և հողատարածքի մակերեսի մասին դիմողի դիմում-հայտարարագրում և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմից առցանց եղանակով ստացած տեղեկանքում առկա տվյալների հիման վրա:

8. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմը տեղեկանքում նշում է ընտանիքին (ըստ ընտանիքի անդամների) պատկանող հողատարածքի մակերեսի չափը (ամբողջ հանրապետությունում), գյուղատնտեսական նշանակության հողամասի հողատեսքը և դրա մեկ հեկտարի կադաստրային զուտ եկամտի չափը:

9. Ընտանիքի միջին ամսական ամբողջական եկամտի մեջ հողօգտագործումից ստացված եկամուտը հաշվարկվում է՝ օգտագործելով մեկ հեկտար տվյալ գյուղատնտեսական նշանակության հողատարածքի համար կադաստրային զուտ եկամտի չափը, սեփականության կամ վարձակալության իրավունքով օգտագործվող հողատարածքի մակերեսը՝ մեկ տասներկուերորդի (1/12-ի) չափով:

10. Սույն կարգի 9-րդ կետով սահմանված հաշվարկով ստացված տարեկան եկամտից հանվում է հողի հարկի կամ վարձավճարի չափը, որը դիմողը լրացնում է դիմում-հայտարարագրում:

11. Օրենքով սահմանված կարգով հողի հարկից ազատված ընտանիքների համար հողօգտագործումից ստացվող եկամուտը չի հաշվարկվում՝ հողի հարկից ազատված լինելու ժամանակահատվածում:

12. Անասնապահությունից և հողօգտագործումից ստացվող եկամուտ չի հաշվարկվում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Չինարի, Այգեձոր, Այգեպար, Պառավաքար, Ներքին Կարմիր աղբյուր, Մոսեսգեղ, Կայան, Վազաշեն, Այգեհովիտ, Ազատամուտ, Սարիգյուղ, Բերքաբեր, Ծաղկավան, Կիրանց, Բերդավան, Դովեղ, Բարեկամավան, Կոթի, Ոսկեվան, Ոսկեպար, Բաղանիս, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Բարձրունի, Խնձորուտ, Խաչիկ, Նոր Ազնաբերդ և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Երասխ, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վահան, Ձիլ, Թթուջուր և Արտանիշ բնակավայրերում բնակվող ընտանիքների համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Ձև

Խնդրվում է լրացնել ընթեռնելի ձեռագրով

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԸՆՏԱՆԻՔԻ ՏՆՕՐԻՆԱԾ ԱՆԱՄՆԱՏԵՍԱԿԻ ԵՎ ԴՐԱ ՔԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Բնակության վայրը _____ _____

(մարզը, համայնքը, փողոցը շենքը, տունը, բնակարանը) (ընտանիքի անդամների թիվը)

NN ը/կ	Ազգանունը, անունը, հայրանունը	Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը	Ազգակցական կապը	Համաձայն եմ տեղեկանքում հայտարարագրված տվյալների հետ (ստորագրությունը)
1.				
2.				
3.				
4.				
5.				
6.				
7.				
8.				

Դիմող_____ _____ 20 թ.

(ազգանունը, անունը, հայրանունը) (ստորագրությունը)

Տարածքային մարմնի աշխատող _____ _____

(ազգանունը, անունը, հայրանունը) (ստորագրությունը)

_____ 20__թ.

Լրացվում է համայնքի անասնաբույժի կողմից:

Հիշեցում. Անասնաբուժական ծառայություն իրականացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձինք ոչ հավաստի տեղեկություններ տրամադրելու դեպքում պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

Տեղեկանք N

NN ը/կ	Ընտանիքի տնօրինած անասնատեսակը	Քանակը (թվերով և բառերով)
1.	Կով	
2.	Այլ սեռահասակային խմբերի տավար	
3.	Գոմշամատակ	
4.	Խոզամայր (խոճկորներով)	
5.	Այլ սեռահասակային խմբերի խոզեր	
6.	Ոչխար, այծ	
7.	Հավ	
8.	Բադ, սագ	
9.	Ձայլամ	
10.	Հնդկահավ	
11.	Մեղվաընտանիք	

_____ անասնաբույժ՝ _____ _____

(համայնքի անվանումը) (ազգանունը, անունը, հայրանունը, անձնագրի համարը, ում կողմից է տրվել) (ստորագրությունը)

_____ _____ 20__թ.:

Հավելված N 6
ՀՀ կառավարության 2014 թվականի
հունվարի 30-ի N 145 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՍՏԵՂԾՄԱՆ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՅԼ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ընտանիքների անապահովության գնահատման համակարգի (այսուհետ՝ գնահատման համակարգ) տեղեկատվական բազան Հայաստանի Հանրապետության սոցիալական պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակվող անձանց (այսուհետ՝ քաղաքացի) անհատական տվյալների միասնական տեղեկատվական շտեմարանի (այսուհետ՝ սոցիալական բանկ) մաս է կազմում:

2. Սոցիալական բանկը բաղկացած է հետևյալ տեղեկատվական բազաներից՝

1) էլեկտրոնային կենսաթոշակի տեղեկատվական համակարգի տվյալների շտեմարան.

2) անձնավորված հաշվառման համակարգի տեղեկատվական շտեմարան.

3) ընտանիքների անապահովության գնահատման տեղեկատվական համակարգի տվյալների շտեմարան.

4) երեխաների ծննդյան միանվագ և մինչև 2 տարեկան երեխաների խնամքի նպաստների տեղեկատվական համակարգի տվյալների շտեմարան.

5) Հայաստանի Հանրապետության զբաղվածության ոլորտի գործառույթներ իրականացնող «Գործ» տեղեկատվական համակարգի տվյալների շտեմարան.

6) «ՎՏԲ-Հայաստան» բանկում որպես նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկի ավանդատուների ավանդների փոխհատուցման տեղեկատվական շտեմարան.

7) հաշմանդամություն ունեցող անձանց հաշվառման տեղեկատվական շտեմարան.

8) կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների հաշվառման տեղեկատվական շտեմարան.

9) պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման տեղեկատվական շտեմարան.

10) սոցիալական պաշտպանության ծրագրերում ընդգրկված տարեցների հաշվառման տեղեկատվական շտեմարան.

11) բարեգործական ծրագրերի հաշվառման տեղեկատվական շտեմարան:

3. Սոցիալական բանկում ներառվում են Հայաստանի Հանրապետության նախարարություններում և այլ պետական մարմիններում, ինչպես նաև կազմակերպություններում առկա տեղեկատվական բազաների (հարակից բազաներ) այն տվյալները, որոնք անհրաժեշտ են քաղաքացիների սոցիալական իրավունքի իրացման համար:

4. Սոցիալական բանկում ներառվում են ստորև նշված հարակից բազաներում առկա տվյալները՝

1) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության տեխնիկական զննություն անցած անձնական օգտագործման ավտոմեքենաների և դրանց փոխադրամիջոցների սեփականատերերի մասին.

2) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության՝

ա. բնակչության պետական ռեգիստրում հաշվառված անձանց

բ. անձնական օգտագործման փոխադրամիջոցների մասին.

3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքսային վճարներ կատարած անձանց մասին.

4) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի՝

ա. քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունում գրանցված անձանց մասին,

բ. իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված իրավաբանական անձանց մասին.

5) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում հողի սեփականատերերի, հողը վարձակալողների մասին, անշարժ գույքի առուվաճառքի գործարքներ կատարած անձանց մասին:

5. Սույն կարգի 2-րդ և 4-րդ կետերում նշված տեղեկատվական բազաների թվարկումն սպառիչ չէ:

6. Սոցիալական բանկում տվյալները մշակվում են և պաշտպանվում «Անհատական տվյալների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

7. Սոցիալական բանկում առկա հարակից բազաների տվյալները և գնահատման համակարգի տվյալները փոխանակվում են համապատասխան տեղեկատվական բազաների միջև՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման N 7 հավելվածի:

8. Գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների տվյալները մշակվում են ընտանիքներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում սոցիալական աջակցություն տրամադրելու որոշում ընդունելու նպատակով:

9. Գնահատման համակարգի տեղեկատվական բազան ստեղծվում է ընտանիքի սոցիալական անձնագրում ամրագրված՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամին և ընտանիքին վերաբերող սոցիալ-տնտեսական պայմանների մասին տվյալների մուտքագրման միջոցով:

10. Գնահատման համակարգի տեղեկատվական բազան բաղկացած է կենտրոնական տեղեկատվական բազայից և դրա բաղկացուցիչ մասերից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման N 1 հավելվածում ներառված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններում (այսուհետ՝ տարածքային կենտրոն) ձևավորված տեղական տեղեկատվական բազաներից:

11. Գնահատման համակարգի տեղեկատվական բազան տնօրինում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, կենտրոնական տեղեկատվական բազան սոցիալական բանկը շահագործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված կազմակերպությունը, իսկ տեղական տեղեկատվական բազաները շահագործում են տարածքային կենտրոնները:

12. Գնահատման համակարգի տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա ստացված տեղեկատվությունը տեղակայվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքէջում՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով հաստատված ձևաչափով:

13. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքէջում տեղակայված տեղեկատվական բազան հասանելի է քաղաքացուն՝ իր տվյալների մասով:

14. Տեղական տեղեկատվական բազան կազմված է գնահատման համակարգում հաշվառված (փաստագրված) և տվյալ տարածքային կենտրոնի սպասարկման տարածքում բնակվող ընտանիքների և նրանց անդամների տվյալներից:

15. Գնահատման համակարգում հաշվառված և նախորդ 12 ամիսների ընթացքում չփաստագրված ընտանիքների կազմի և պայմանների մասին տվյալները պահպանվում են գնահատման համակարգի տեղեկատվական բազայում՝ անժամկետ:

16. Գնահատման համակարգի կենտրոնական, տեղական տեղեկատվական բազաներ և սոցիալական բանկ մուտքի թույլտվություն ունի այն շահագործող անձնակազմը:

17. Կենտրոնական, տեղական տեղեկատվական բազաները և սոցիալական բանկը շահագործող անձնակազմի յուրաքանչյուր աշխատող ունի տեղեկատվական բազայի հետ աշխատանքի իր ծածկագիրը, նշանաբանը և կարգը, որոնցով որոշվում են յուրաքանչյուրի տեղեկատվական բազա մուտքի, անհատական տվյալների պաշտպա-

նության և տեղեկատվական բազայի շահագործման համար լիազորությունների իր շրջանակները:

18. Տարածքային կենտրոնի յուրաքանչյուր աշխատող տարածքային կենտրոնի ղեկավարի կարգադրությամբ կատարում է իրեն ամրակցված սպասարկման որոշակի տարածքի ընտանիքների հաշվառումը (փաստագրումը) և նրանց տվյալների տեղեկատվական բազայի սպասարկումը, նրանց անհատական տվյալների, դրանց փոփոխությունների, սոցիալական աջակցության հատկացման համար իրավունքի ծրագրային որոշումը:

19. Տարածքային կենտրոնի աշխատողն իր ծածկագրով և նշանաբանով մուտք ունի միայն իր սպասարկման տարածքի տեղեկատվական բազա:

20. Տարածքային կենտրոնի աշխատողի ծածկագիրը և նշանաբանը գնահատման համակարգի տեղեկատվական բազայում լրացնում է ամբողջ տեղական տեղեկատվական բազայի պատասխանատու աշխատողը՝ ապահովելով յուրաքանչյուր աշխատողի կողմից իր ծածկագրի գաղտնի մուտքագրումը:

21. Տեղեկատվական բազայի պատասխանատու աշխատողի պարտականություններն ամրացվում են տարածքային կենտրոնի աշխատողներից մեկին՝ տարածքային կենտրոնի ղեկավարի կարգադրությամբ:

22. Տեղեկատվական բազայի պատասխանատու աշխատողն ապահովում է տվյալների տեղական տեղեկատվական բազայի ամբողջականության պահպանումը, իրականացնում տեղեկատվական բազայի սպասարկման բոլոր գործառույթները՝ բազայի սպասարկում, բառարանների կազմում, նշանաբանների փոփոխություն, տվյալ տեղական տեղեկատվական բազայում անձի կրկնակի հաշվառման հայտնաբերում, տեղափոխված ընտանիքի սոցիալական անձնագրի համարի մուտքագրում, նպաստ վճարող մարմնի աշխատողի երթուղիների մուտքագրում, ժամկետանց սոցիալական խմբերի հեռացում, ընտանիքի անապահովության միավորի հաշվարկ, ռեեստրների մուտքագրում, հաշվետվության կազմում:

23. Տեղեկատվական բազայի պատասխանատու աշխատողն ապահովում է տարածքային կենտրոնի և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ի դեմս կենտրոնական տեղեկատվական բազան շահագործող կազմակերպության, միջև տվյալների՝ միմյանց փոխանցումը:

24. Տեղեկատվական բազայի պատասխանատու աշխատողի բացակայության դեպքում նրան փոխարինում է տարածքային կենտրոնի մեկ այլ աշխատող, որի վրա պատասխանատու աշխատողի լիազորությունները դրվում են տարածքային կենտրոնի պետի կարգադրությամբ (հրամանով): Փոխարինող պատասխանատու աշխատողը տեղական տեղեկատվական բազայում աշխատում է հիմնական պատասխանատու աշխատողի նշանաբանով, սակայն իր ծածկագրով: Ծածկագրի գաղտնի փոփոխությունն ապահովում է հիմնական պատասխանատու աշխատողը: Ծածկագրի փոփոխության

հանգամանքը, տեղական տեղեկատվական բազայի և փաստաթղթերի հանձնում-ընդունումն արձանագրվում են, որն ստորագրում են պատասխանատու աշխատողը և նրան փոխարինող համապատասխան աշխատողը:

25. Տեղեկատվական բազայի պատասխանատու աշխատողի անսպասելի բացակայության դեպքում նրան փոխարինող տեղեկատվական բազայի պատասխանատու աշխատողի տեղական տեղեկատվական բազա մուտքի թույլտվությունն ապահովում է կենտրոնական տեղեկատվական բազան շահագործող կազմակերպության աշխատողը: Տեղեկատվական բազայի պատասխանատու աշխատողի աշխատանքի վերադարձի ժամանակ հանձնում-ընդունումը կատարվում է սույն կարգով:

26. Տարածքային կենտրոնի աշխատողներից մեկի բացակայության ընթացքում նրան փոխարինում է տարածքային կենտրոնի այլ աշխատող, որին այդ լիազորությունները փոխանցվում են տարածքային կենտրոնի ղեկավարի կարգադրությամբ (հրամանով): Փոխարինող աշխատողն աշխատում է տեղական տեղեկատվական բազայում հիմնական աշխատողի նշանաբանով, սակայն իր ծածկագրով, որի գաղտնի մուտքագրումը տեղական տեղեկատվական բազա ապահովում է տեղեկատվական բազայի պատասխանատու աշխատողը: Ծածկագրի փոփոխության հանգամանքը և տեղական տեղեկատվական բազայի համապատասխան փաստաթղթերի հանձնում-ընդունումն արձանագրվում է, որն ստորագրում են 2 աշխատողները: Աշխատողի անսպասելի բացակայության դեպքում արձանագրությունն ստորագրում են տեղեկատվական բազայի պատասխանատու աշխատողն ու նրան փոխարինող աշխատողը:

27. Տարածքային կենտրոնի աշխատողի աշխատանքի վերադարձի ժամանակ հանձնում-ընդունումը կատարվում է սույն կարգի 26-րդ կետում նշված ընթացակարգով:

28. Գնահատման համակարգի տեղական տեղեկատվական բազայի շահագործման անվտանգ պայմաններն ապահովում է մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը կամ Երևան քաղաքի վարչական շրջանի ղեկավարը, Գյումրու, Վանաձորի, Արարատի, Ջերմուկի քաղաքային համայնքների ղեկավարների աշխատակազմերի քարտուղարները:

29. Գնահատման համակարգի տեղեկատվական բազայի պաշտպանության մաթեմատիկական ծրագրային ապահովումն իրականացնում է կենտրոնական տեղեկատվական բազան շահագործող կազմակերպությունը:

II. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ

30. Տեղական տեղեկատվական բազայում ընտանիքի կազմում և պայմաններում տեղի ունեցած փոփոխություններն ամրագրվում են դրա մասին փաստաթղթերը ներկայացնելուց անմիջապես հետո՝ մեկօրյա ժամկետում:

31. Ընտանիքի որևէ անդամի սոցիալական խմբի ժամկետը լրանալու դեպքում տվյալ սոցիալական խմբի, դրանով պայմանավորված եկամտի չափի հանումը և սոցիալական խմբի փոփոխումը կատարվում են տվյալ ամսվա ընթացքում մաթեմատիկական ծրագրային եղանակով:

32. Հաշմանդամության խմբի ժամկետի երկարացման վերաբերյալ տվյալ փոփոխության ամրագրումը կատարվում է ընտանիքի չափահաս անդամներից մեկի

կողմից փաստաթուղթ ներկայացվելու դեպքում: Եթե այն ներկայացվում է ժամկետի լրացման օրվանից 3 ամսվա ընթացքում, ապա, անկախ հաշմանդամության խմբից, ժամկետը վերականգնվում է նախորդ ժամկետի լրացման ամսաթվից սկսած, իսկ եկամուտը ներկայացված փաստաթղթում ամրագրված տվյալին համապատասխան:

33. Եթե ընտանիքի հղի անդամի հղիության ժամկետը լրանում է և 2 ամսվա ընթացքում ներկայացվում է երեխայի ծննդյան վկայականը, ապա դրա արդյունքում ձեռք բերված անապահովության միավորը վերականգնվում է ընտանիքի հղի անդամի հղիության ժամկետի լրացման ամսաթվից սկսած:

34. Կենտրոնական տեղեկատվական բազան թարմացվում է ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ, տարածքային կենտրոնների տրամադրած արդիականացված տեղեկատվական բազաների միջոցով՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 8-ը:

35. Կենտրոնական տեղեկատվական բազայում իրականացվում են՝

1) համադրումներ ընտանիքների կամ նրանց անդամների կրկնակի հաշվառումները հայտնաբերելու նպատակով՝ ամբողջ կենտրոնական տեղեկատվական բազայում.

2) տարբեր նախարարություններից և պետական այլ մարմիններից, ինչպես նաև կազմակերպություններից, անկախ կազմակերպական-իրավական ձևից, ստացված տեղեկատվական հարակից բազաների մշակում և համադրում.

3) ուղղումներ (միայն չափահաս անձանց տվյալների) անձը հաստատող փաստաթղթի հիման վրա ամրագրված տվյալներում (ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը)՝ բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական բազայում առկա տվյալների հետ համադրման ժամանակ հայտնաբերված անհամապատասխանությունների դեպքում.

4) կենսաթոշակի, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի, «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34.1-ին հոդվածով սահմանված պարգևավճարների ամրագրված չափի փոփոխություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ դրանց չափի բարձրացման դեպքում՝ բարձրացման ամսվան հաջորդող ամսվա ընթացքում:

36. Գնահատման համակարգի միջոցով իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկվում են տվյալ ծրագրի համար սահմանված սոցիալական տվյալներ ունեցող և անապահովության սահմանային միավորից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքները:

37. Գնահատման համակարգի տվյալների հիման վրա իրականացվող սոցիալական աջակցության բաշխման ծրագրերում չեն ընդգրկվում (անկախ սույն կարգի 36-րդ կետով նախատեսված պայմանների բավարարումից)՝

1) կրկնակի հաշվառված կամ ընտանիքի կրկնակի հաշվառված անդամ ունեցող ընտանիքները՝ մինչև կրկնակի հաշվառումից դուրս գալը.

2) ծրագրի իրականացման պահին նախորդած 12 ամսվա ընթացքում չփաստագրված ընտանիքները:

III. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ

38. Տարածքային կենտրոնը տեղեկատվական բազայի փոփոխությունները՝ արդիականացված տվյալները, փոխանցում է կենտրոնական տեղեկատվական բազան շահագործող կազմակերպությանը՝ առցանց:

39. Տեղական տեղեկատվական բազայում տվյալ ամսվա ընթացքում կատարված փոփոխություններն արխիվացվում են տվյալ ամսվա վերջին օրացուցային օրվա դրությամբ:

40. Կենտրոնական տեղեկատվական բազան շահագործող կազմակերպությունից ամենամսյա արդիականացված տեղական տեղեկատվական բազաները 15-օրյա ժամկետում փոխանցվում են տարածքային կենտրոններին՝ առցանց:

41. Հարակից բազաներից ստացված տվյալների և գնահատման համակարգի տեղեկատվական բազայում առկա տվյալների հետ համադրման արդյունքները կենտրոնական տեղեկատվական բազան շահագործող կազմակերպությունը փոխանցում է տարածքային կենտրոններին՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցով՝ ցուցակների ձևով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հավելված N 7
ՀՀ կառավարության 2014 թվականի
հունվարի 30-ի N 145 - Ն որոշման

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱՆԿԻ, ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՅՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎՈՂ

NN ը/կ	Նախարարության, այլ պետական մարմնի, կազմակերպության անվանումը	Բովանդակությունը	Անհրաժեշտ տվյալները	Պարբերականությունը	Ժամկետը	Կրիչը	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հացերի նախարարության կողմից տրամադրվող տվյալի բովանդակությունը
1	2	3	4	5	6	7	8
1.	Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն	անձնական օգտագործման փոխադրամիջոցներ	դիմելու նախորդ տարում տեխնիկական զննում անցած փոխադրամիջոցի սեփականատիրոջ ազգանունը, անունը, փոխադրամիջոցի մակնիշը,	յուրաքանչյուր ամիս	հաջորդ ամսվա 10-ը	առցանց՝ վեբ ծառայության միջոցով	Սեփականատիրոջ հանրային ծառայությունների համարանիշ

			հաշվառման համարանիշը, նույնականացման համարը				
2.	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն	1. անձնական օգտագործման փոխադրամիջոցներ 2. բնակչության պետական ռեգիստրում հաշվառված անձանց մասին	փոխադրամիջոցի սեփականատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրի սերիան, համարը, բնակության վայրը, տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը և մակնիշը, նույնականացման համարը Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի N 713-Ն որոշման համաձայն	առցանց հարցման համաձայն	առցանց հարցման օրը	առցանց՝ վեբ ծառայության միջոցով	ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք ունեցող (կամ հավակնող) անձանց անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը, հանրային ծառայությունների համարանիշը
3.	«Հայաստանի էլեկտրական	էլեկտրաէներգիայի	բաժանորդի անունը,	տարեկան մեկ	սեպտեմբերի	մագնի-	

	ցանցեր» ՓԲԸ (համաձայնությամբ)	անհատ բաժանորդներ	հայրանունը, ազգանունը, բնակության վայրը, անձնագրի սերիան, համարը, բաժանորդի քարտի համարը, էլեկտրաէներգիայի սպառման ամսական չափը, սոցիալական ապահովության քարտի համարը	անգամ, տվյալ տարվա (6-րդ, 7-րդ և 8-րդ ամիսների) ծախսը	25-ը	սական կրիչով	
4.	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	մաքսային վճարներ	անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը, անձնագրի սերիան, համարը և մաքսային վճարների չափը, սոցիալական ապահովության քարտի համարը	յուրաքանչյուր ամիս	հաջորդ ամսվա 25-ը	էլեկտրոնային փոստով, իսկ 2014 թվականի հոկտեմբերից՝ առցանց՝ վեբ ծառայության միջոցով	
5.	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն	մահացածի, ծնվածի, նորածնի ծնողների տվյալները	Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի N 723-Ն որոշման համաձայն	Հայաստանի Հանրապետու-յան կառավարու-թյան 2011 թվականի մայիսի 26-ի N 723-Ն որոշման համաձայն	Հայաստանի Հանրապետու թյան կառա-վարու-թյան 2011 թվա-կանի մայիսի 26-ի N 723-Ն որոշման համաձայն	առցանց՝ վեբ ծառայության միջոցով	
		ամուսնալուծ-վածների տվյալները	հայրության որոշման վկայականի համարը,	առցանց հարցման հանաձայն	առցանց հարցման օրը	առցանց՝ վեբ ծառայության	

			ամուսնալուծության վկայականի համարը, ամուսնալուծության օրը, ամիսը, տարեթիվը			միջոցով	
6.	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն	ՍՊԸ ՓԲԸ ԲԲԸ ԼՏՀ ԼՊՀ վստահության վրա հիմնված ընկերություն	կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, գրանցված անդամների անունները, հայրանունները, ազգանունները, բնակության վայրերը, անձնագրերի և վկայականների համարներն ու գրանցման ամսաթվերը, ամիսները, տարեթվերը, հանրային ծառայությունների համարանիշը	յուրաքանչյուր ամիս	հաջորդ ամսվա 10-ը	առցանց՝ վեբ ծառայության միջոցով	
7.	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	1. սեփականատիրոջ (համասեփականատե-րերի) մասին տվյալներ	1. ֆիզիկական անձ հանդիսացող սեփականատիրոջ (համասեփականա-տերերի) անձը հաստատող փաստաթղթի տվյալները (սերիան և համարը), հանրային	առցանց հարցման հանաձայն	առցանց հարցման օր-վան հաջոր-դող 10-րդ օրը	առցանց՝ վեբ ծառայության միջոցով	անշարժ գույքի օտարման գործարքներով սեփականության իրավունք ձեռք բերողների, հողի սեփականատե-րերի, հողը վարձակալողների հանրային

		2. գյուղատնտեսական նշանակության հողամասերի տվյալներ 3. գործարքի մասին	ծառայությունների համարանիշը 2. անշարժ գույքի գտնվելու վայրը, հողամասի և շինությունների կադաստրային ծածկագրերը, կադաստրային արժեքները, գյուղատնտեսական հողամասերի կադաստրային զուտ եկամուտի չափը 3. գործարքի տեսակը, պայմանագրի գինը, գործարքից ծագող իրավունքների պետական գրանցման ամսաթիվը				ծառայությունների համարանիշը

Ըստ անհրաժեշտության՝ Հայաստանի Հանրապետության նախարարությունների, այլ պետական մարմինների, կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև տվյալները փոխանակվում են համատեղ համաձայնեցված ձևաչափերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հավելված N 8
ՀՀ կառավարության 2014 թվականի
հունվարի 30-ի N 145 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ԿԱՄ ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ

1. Սույն ակտով կարգավորվում են ընտանեկան կամ սոցիալական (այսուհետ՝ երկուսը միասին՝ նպաստ) կամ հրատապ օգնության նշանակման և վճարման հետ կապված հարաբերությունները:

2. Նպաստի և հրատապ օգնության վճարումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ համապատասխան սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնին (այսուհետ՝ տարածքային կենտրոն) այդ նպատակով հատկացված ֆինանսական միջոցների սահմանում:

3. Նպաստի և հրատապ օգնության համար ֆինանսական միջոցների չափերն ըստ տարածքային կենտրոնների, հաշվի առած ընտանիքների անապահովության գնահատման կարգով որոշված աղքատ ընտանիքների թիվը, ընտանիքի անապահովության սահմանային մեծության միավորը, ընտանեկան նպաստի բազային մասը և ընտանիքի յուրաքանչյուր անչափահաս (մինչև 18 տարեկան) անդամին տրվող հավելման չափերը, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Նպաստը նշանակվում է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում (այսուհետ՝ գնահատման համակարգ) հաշվառված՝ (փաստագրված) ընտանիքի անապահովության սահմանային մեծության միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքին՝ «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով սահմանված կարգով դիմելու ամսվան հաջորդող ամսվանից՝ մինչև նպաստի վճարման դադարեցման հիմքերի առաջացումը:

5. Գնահատման համակարգում հաշվառվելու համար տարածքային կենտրոն ներկայացված դիմում-հայտարարագիրը համարվում է նպաստ կամ հրատապ օգնություն նշանակելու համար տրված դիմում:

6. Տարածքային կենտրոնի աշխատողի կողմից տվյալ ընտանիքի համար կազմված Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման N 3 հավելվածի 42-րդ կետով սահմանված սոցիալական գործը համարվում է նպաստի գործ, որը պահպանում է տարածքային կենտրոնը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Ընտանիքը գնահատման համակարգում հաշվառելու (փաստագրելու), ինչպես նաև դրանից հետո ընտանիքի անապահովության միավորի փոփոխության դեպքերում, որը հանգեցնում է տվյալ ընտանիքի ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք ձեռք բերելուն կամ իրավունքը կորցնելուն կամ ընտանեկան նպաստի չափի կամ նպաստի տեսակի փոփոխության, տարածքային կենտրոնի տվյալ տարածքն սպասարկող աշխատողը տպում է տեղեկատվական բազայում ձևավորված՝ տվյալ ընտանիքի սոցիալական անձնագրի առաջին էջը, որը պահպանվում է սոցիալական գործում:

8. Տարածքային կենտրոնի տվյալ տարածքն սպասարկող աշխատողը Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման

N 3 հավելվածի 47-րդ կետով սահմանված տնային այցելության արձանագրությունը՝ եզրակացության ու նպաստ նշանակելու կամ մերժելու առաջարկության հետ միասին, ներկայացնում է տարածքային կենտրոնի ղեկավարին, որը բաժնի պետի կամ գլխավոր մասնագետի առաջարկության հիման վրա ընդունում է որոշում տվյալ ընտանիքին նպաստ նշանակելու մասին:

9. Նպաստ նշանակելու կամ մերժելու որոշման մասին դիմողն իրազեկվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) պաշտոնական կայքէջում տեղակայված տեղեկատվական բազայից, որը հասանելի է դիմող ընտանիքին՝ իր տվյալների մասով:

10. Ընտանիքի՝ նպաստի իրավունքի ձեռքբերման դեպքում տարածքային կենտրոնի տվյալ տարածքն սպասարկող աշխատողը տեղեկատվական բազայում դիմումների էլեկտրոնային մատյանում մուտքագրում է դիմումը, ստանում և տպում է նպաստի նշանակման մասին կարգադրությունը՝ համաձայն N 1 ձևի:

11. Եթե ընտանիքի կազմում կա որոշակի ժամկետով սոցիալական խումբ ունեցող մի քանի անդամ, ապա նպաստը վճարվում է մինչև սոցիալական խմբերի ամենավաղ ժամկետը լրանալու ամիսը ներառյալ: Տվյալ ընտանիքի նպաստի իրավունքը տվյալ սոցիալական խմբի ժամկետը լրանալու ամսվա վերջին օրվա դրությամբ վերանայվում է գնահատման համակարգի տեղեկատվական բազայում՝ ծրագրային եղանակով, և նպաստի իրավունքի պահպանման դեպքում՝ անկախ նպաստի տեսակի փոփոխությունից, նպաստի վճարումը շարունակվում է մինչև հաջորդ ժամկետը լրանալը՝ ընտանիքի անապահովության միավորի տվյալ տիրույթի համար սահմանված չափով:

12. Եթե լրանում է ընտանիքի հաշմանդամություն ունեցող անդամի հաշմանդամության ժամկետը, և այդ պահին չի ներկայացվում համապատասխան փաստաթուղթ, ու չի պահպանվում նպաստի իրավունքը, ապա այդ ընտանիքին նպաստի վճարումը կասեցվում է 3 ամսով:

13. Եթե լրանում է ընտանիքի հղի անդամի հղիության ժամկետը, և այդ պահին չի ներկայացվում երեխայի ծննդյան վկայականը, և չի պահպանվում նպաստի իրավունքը, ապա նպաստի վճարումը կասեցվում է 2 ամսով:

14. Եթե լրանում է ընտանիքի հաշմանդամություն ունեցող անդամի հաշմանդամության ժամկետը, և այդ ընտանիքը 3 ամսվա ընթացքում ներկայացնում է համապատասխան փաստաթուղթ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու մասին, անկախ հաշմանդամության խմբի փոփոխությունից, և դրա արդյունքում ձեռք է բերում անապահովության սահմանային մեծության միավորից բարձր միավոր, ապա նպաստի վճարումը շարունակվում է կասեցված ամսվանից՝ ընտանիքի անապահովության միավորի տվյալ տիրույթի համար սահմանված չափով:

15. Եթե լրանում է ընտանիքի հղի անդամի հղիության ժամկետը, և 2 ամսվա ընթացքում ներկայացվում է երեխայի ծննդյան վկայականը, և ընտանիքն արդյունքում

ձեռք է բերում ընտանիքի անապահովության սահմանային մեծության միավորից բարձր միավոր, ապա նպաստի վճարումը շարունակվում է կասեցված ամսվանից՝ ընտանիքի անապահովության միավորի տվյալ տիրույթի համար սահմանված չափով՝ անկախ նպաստի տեսակի փոփոխությունից:

16. Ընտանիքի անապահովության միավորի փոփոխության դեպքում, որը հանգեցնում է նպաստի չափի կամ տեսակի փոփոխության, տարածքային կենտրոնի տվյալ տարածքն սպասարկող աշխատողը տեղեկատվական բազայում ստանում և տպում է նպաստի նշանակման մասին կարգադրությունը (N 1 ձև):

17. Ընտանիքի կազմի փոփոխությամբ կամ ընտանիքի անչափահաս անդամի 18 տարեկանը լրանալու պատճառով նպաստի տեսակի փոփոխության դեպքում՝ տարածքային կենտրոնի տվյալ տարածքն սպասարկող աշխատողը տեղեկատվական բազայում ստանում և տպում է նպաստի նշանակման մասին կարգադրությունը (N 1 ձև):

18. Սույն կարգի 10-րդ, 16-րդ և 17-րդ կետերով սահմանված կարգադրությունները տեղադրվում են սոցիալական գործում:

19. Նպաստը կամ հրատապ օգնությունը նշանակվում և վճարվում է դիմողին: Նպաստի կամ հրատապ օգնության վճարման պահին դիմողի բացակայության դեպքում նպաստը կամ հրատապ օգնությունը կարող է վճարվել ընտանիքի այլ չափահաս անդամի:

20. Նպաստը կամ հրատապ օգնությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է վճարվել նաև քաղաքացու օրինական ներկայացուցչին (խնամակալ, հոգաբարձու):

21. Միայնակ բնակվող կենսաթոշակառուին նշանակված, բայց նրա մահվան պատճառով չվճարված նպաստը կամ հրատապ օգնությունը՝ ներառյալ մահվան ամիսը, վճարվում է հուղարկավորությունը կազմակերպած անձին՝ տեղական ինքնակառավարման մարմնի տված տեղեկանքի հիման վրա, եթե նա դիմել է միայնակ բնակվող կենսաթոշակառուի մահվան ամսվան հաջորդող երկու ամիսների ընթացքում:

22. Ընտանիքի նպաստի վճարումը դադարեցվում է նպաստի իրավունքը կորցնելու հաջորդ ամսվանից:

23. Դիմողի կողմից՝ նպաստի իրավունք տվող ոչ հավաստի տեղեկություններով փաստաթղթեր ներկայացվելու կամ նպաստի իրավունք տվող ընտանիքի եկամուտներում կամ ընտանիքի կազմում ու պայմաններում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ հավաստի տեղեկություններով փաստաթղթեր չներկայացվելու դեպքում նպաստի վճարումը դադարեցվում է դրանց հայտնաբերման ամսվանից:

24. Ընտանիքի՝ նպաստի իրավունքը կորցնելու դեպքում տարածքային կենտրոնի տվյալ տարածքն սպասարկող աշխատողը տեղեկատվական բազայում ստանում և տպում է նպաստի վճարման դադարեցման մասին կարգադրությունը՝ համաձայն N 2 ձևի, որը հաշվառվում է դիմում-հայտարարագրերի հաշվառման մատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման N 3 հավելվածի N 2 ձևի:

25. Նպաստի վճարման դադարեցման որոշման մասին դիմողն իրազեկվում է սույն կարգի 9-րդ կետով սահմանված կարգով:

26. Նպաստի վճարման դադարեցման դեպքում սոցիալական գործերի հաշվառման էլեկտրոնային մատյանի «Ծանոթագրություն» սյունակում նշվում են նպաստի վճարման դադարեցման մասին որոշումը և ամսաթիվը:

27. Նպաստի վճարման ընթացքում տարածքային կենտրոնի կողմից տվյալ ընտանիքի կազմի փոփոխության հայտնաբերման, ինչպես նաև ընտանիքի անապահովության միավորի փոփոխության դեպքում, որը հանգեցնում է նպաստի չափի նվազման, կատարվում է նպաստի չափի վերահաշվարկ և կազմվում է վերահաշվարկի մասին կարգադրություն՝ համաձայն N 3 ձևի:

28. Վերահաշվարկի մասին կարգադրությանը տրվում է հերթական համար, որը գրանցվում է վերահաշվարկի մասին կարգադրությունների հաշվառման մատյանում՝ նշելով կարգադրության համարը, ամսաթիվը, սոցիալական անձնագրի համարը, դիմողի անունը, ազգանունը, բնակության վայրը, վճարման ենթակա գումարը, վճարումից հետո՝ տեղեկատվություն դրա մասին:

29. Վերահաշվարկի մասին կարգադրությունը բաղկացած է 3 մասից: Առաջին 2 մասը լրացնում է տարածքային կենտրոնը: Սոցիալական գործում մնում է կարգադրության առաջին մասը, երկրորդ մասը մնում է «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վճարող կազմակերպությունում (այսուհետ՝ վճարող կազմակերպություն), իսկ երրորդ մասը՝ լրացված՝ վճարող կազմակերպության կողմից, վերադարձվում է տարածքային կենտրոն՝ վճարման ռեեստրների հետ միասին:

30. Վերահաշվարկի մասին կարգադրության երկրորդ և երրորդ մասերն ուղարկվում են վճարող կազմակերպություն, որը վերահաշվարկի մասին կարգադրության երկրորդ մասն ամրացնում է վճարման ցուցակի, իսկ երրորդ մասը՝ ռեեստրի համապատասխան էջերին:

31. Վճարման ցուցակի և ռեեստրի նույն էջի դարձերեսին ձեռագրով լրացվում է չվճարված գումարի չափը, նշվում է կարգադրության համարը, ստորագրվում և կնքվում է վճարող կազմակերպության պատասխանատու աշխատողի կողմից:

32. Չվճարված գումարի չափն արտացոլվում է վճարումն ավարտվելուց հետո՝ վճարման ցուցակի և ռեեստրի ամփոփ տվյալներում՝ առանձին տողով:

33. Տարածքային կենտրոնը մինչև յուրաքանչյուր ամսվա 8-ը նախարարություն է ներկայացնում տեղեկատվություն՝ համաձայն N 4 ձևի, այն ընտանիքների մասին, որոնց՝

1) ընտանիքի անապահովության գնահատման միավորը վերականգնվել է.

2) ոչ նպաստառուի մեղքով չստացած նպաստի գումարները վերականգնվել են.

3) նշանակվել են ընտանիքում երեխայի ծննդյան կամ երեխայի առաջին դասարան ընդունվելու կամ ընտանիքի անդամի մահվան դեպքում միանվագ հրատապ օգնություններ:

34. Նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչությունում տեղեկատվության ուսումնասիրությունից հետո համապատասխան փոփոխություններ են կատարվում գնահատման համակարգի տեղեկատվական բազայում:

35. Ընտանիքի բնակության վայրը փոխվելու դեպքում ընտանիքին վճարվում է նախկին բնակության վայրի տարածքային կենտրոնի նշանակած և չվճարված նպաստի կամ հրատապ օգնության գումարը, եթե մի բնակության վայրից մեկ այլ բնակության վայր տեղափոխվելուց հետո նոր բնակության վայրի տարածքային կենտրոնում այդ ընտանիքը հաշվառվել է 21-օրյա ժամկետում:

36. Հրատապ օգնության համար դիմողը «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ, 20-րդ և 21-րդ հոդվածներով սահմանված ժամկետում տարածքային կենտրոն է ներկայացնում դիմում՝ համաձայն N 5 ձևի, և՝

1) ընտանիքում երեխայի (երեխաների) ծննդյան դեպքում տվյալ երեխայի (երեխաների) ծննդյան վկայականը (վկայականները), իսկ կյանքի 4 շաբաթվա ընթացքում մահացած երեխայի (երեխաների) համար՝ երեխայի ծննդի պետական գրանցման փաստը հաստատելու մասին փաստաթուղթ՝ տրված քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից.

2) երեխայի առաջին դասարան ընդունվելու դեպքում՝ տվյալ երեխայի հանրակրթական ուսումնական հաստատության առաջին դասարան ընդունվելու մասին տեղեկանք.

3) ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ մահվան վկայականը և տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրված տեղեկանք՝ հուղարկավորության կազմակերպման մասին:

37. Միանվագ հրատապ օգնության նշանակման մասին կարգադրությունը՝ համաձայն N 6 ձևի, լրացվում և կարվում է սոցիալական գործում:

38. Եռամյակային հրատապ օգնությունը նշանակվում է նպաստի իրավունք չունեցող և «0» միավորից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքին՝ անհետաձգելի լուծում պահանջող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու դեպքում՝ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) առաջարկությամբ՝ հաշվի առնելով «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված հանգամանքները:

39. Ընտանիքին եռամյակային հրատապ օգնություն նշանակելու համար տարածքային կենտրոնի տվյալ տարածքն սպասարկող աշխատողը Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման N 3 հավելվածի 47-րդ կետով սահմանված կարգով կատարում է տնային այցելություն և ներկայացնում առաջարկություն եռամյակային հրատապ օգնության նշանակելու հարցը խորհրդի քննարկմանը ներկայացնելու վերաբերյալ:

40. Տարածքային կենտրոնն ընթացիկ եռամսյակի վերջին ամսվա վերջին 10 աշխատանքային օրվա ընթացքում խորհուրդ է ներկայացնում այն ընտանիքների ցուցակը՝ համաձայն N 7 ձևի, որոնց եռամսյակային հրատապ օգնություն նշանակելու մասին դիմումներն ուսումնասիրվել են սույն կարգի 39-րդ կետով սահմանված կարգով:

41. Տարածքային կենտրոնի ղեկավարը խորհուրդ է ներկայացնում տեղեկատվություն հաջորդ եռամսյակում հրատապ օգնության նշանակման համար ունեցած ֆինանսական միջոցների չափի մասին:

42. Խորհուրդը քննարկում է եռամսյակային հրատապ օգնություն նշանակելու համար ներկայացված դիմումները և 7-օրյա ժամկետում նախապատրաստում հիմնավորված առաջարկություն այն ընտանիքների վերաբերյալ, որոնց նախատեսվում է հաջորդ եռամսյակում նշանակել հրատապ օգնություն: Տարածքային կենտրոնը խորհրդից ստացված ցուցակները կարում է առանձին թղթապանակում և պահում ֆինանսական փաստաթղթերին համահավասար:

43. Եռամսյակային հրատապ օգնությունը նշանակում է տարածքային կենտրոնը՝ Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների համար հատկացված միջոցների շրջանակներում, որը մշտադիտարկվում է նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության կողմից:

44. Եռամսյակային հրատապ օգնությունը նշանակվում է 3 ամիս ժամկետով:

45. Եռամսյակային հրատապ օգնության նշանակման մասին կարգադրությունը՝ համաձայն N 8 ձևի, լրացվում և կարվում է սոցիալական գործում:

46. Եռամսյակային հրատապ օգնության վճարումը դադարեցվում է տվյալ եռամսյակի ընթացքում, եթե՝

1) տվյալ ընտանիքի փաստագրման ժամկետը լրացել է այդ եռամսյակի ընթացքում, և չեն ներկայացվել անհրաժեշտ փաստաթղթերը.

2) տվյալ ընտանիքը կամ ընտանիքի անդամներից մեկը կրկնակի է հաշվառված.

3) ընտանիքի անապահովության միավորն այդ եռամսյակի ընթացքում դարձել է «0» կամ ընտանիքը ձեռք է բերել նպաստի իրավունք:

47. Նպաստի և հրատապ օգնության ցուցակները կազմում և տպում է գնահատման համակարգի կենտրոնական տեղեկատվական բազան շահագործող կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն)՝ տարածքային կենտրոնների տրամադրած ամենամսյա տեղեկատվության հիման վրա:

48. Նպաստը և հրատապ օգնությունը վճարվում են յուրաքանչյուր ամիս (անհրաժեշտության դեպքում՝ 2 ամսվանը միասին) վճարման ցուցակներով՝ համաձայն NN 9 և 10 ձևերի:

49. Բնակչությանը՝ ընտանեկան կամ սոցիալական նպաստ կամ հրատապ օգնություն ստացող ընտանիքների մասին իրազեկվում է վճարման ցուցակների երկրորդ օրինակը տեսանելի վայրերում փակցնելու միջոցով և սույն կարգի 9-րդ կետով սահմանված ձևով:

50. Տարածքային կենտրոնը վճարման ցուցակները և տիտղոսաթերթերը կազմակերպությունից ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում վճարման ցուցակի յուրաքանչյուր էջն ստուգում է, ստորագրում, կնքում և հանձնում համապատասխան վճարող կազմակերպություն՝ համաձայն N 11 ձևի:

51. Տարածքային կենտրոնում տարածքային կենտրոնի ղեկավարի կողմից վճարման ցուցակները հանձնվում են վճարող կազմակերպության լիազորած անձին: Տարածքային կենտրոնի ղեկավարը և վճարող կազմակերպության լիազորած անձն ստորագրում են տիտղոսաթերթի 2 օրինակները, որոնցից մեկը մնում է տարածքային կենտրոնում, մյուսը՝ վճարող կազմակերպությունում:

52. Վճարման ցուցակների էջերը համարակալվում են:

53. Վճարման ցուցակների յուրաքանչյուր էջի գլխամասում նշվում են տարեթիվը, ամիսը, տարածքային կենտրոնի, վճարող կազմակերպության, բնակավայրի անվանումները և վճարող կազմակերպության համարը:

54. Վճարման ցուցակի ամեն տողում նշվում են մեկ նպաստառու կամ հրատապ օգնություն ստացող ընտանիքի մասին տվյալները:

55. Յուրաքանչյուր էջի վերջում նշվում են այդ էջում գրանցված նպաստառու կամ հրատապ օգնություն ստացող ընտանիքների թիվը, վճարման ենթակա նպաստի կամ հրատապ օգնության, վերահաշվարկի կարգադրությամբ չվճարված և փաստացի վճարված գումարների չափերը, կնիքի և տարածքային կենտրոնի ղեկավարի ու տեղեկատվական բազայի վարչական պատասխանատու աշխատողի ստորագրությունների տեղերը:

56. Վճարման ցուցակի վերջում նշվում են սույն կարգի 55-րդ կետով սահմանված տեղեկությունների ամփոփ տվյալները:

57. Ընտանիքի չափահաս անդամներից մեկի պահանջով նպաստը կամ հրատապ օգնությունը նրան վճարվում է իր մասով, որի չափը որոշվում է նպաստի կամ հրատապ օգնության գումարն ընտանիքի անդամների թվի վրա բաժանելով:

58. Վճարման ցուցակում մեկ պարզ գծով ջնջվում է ընտանիքին վերաբերող ամբողջ տողը (ներառյալ ռեեստրը) և նույն էջի հակառակ երեսին ձեռագրով լրացվում են ընտանիքի այն չափահաս անդամների անունները, ազգանունները՝ ընտանիքի սոցիալական անձնագրում նշված կազմին համապատասխան, որոնց նպաստը կամ հրատապ օգնությունը վճարվում է իրենց մասով:

59. Եթե պահանջվում է նպաստը վճարել ընտանիքի մի քանի անդամի համար, ապա մեկ անձին հասանելիք մասին համապատասխանող գումարը բազմապատկվում է այդ անձանց թվով և նշվում որպես վճարման ենթակա գումար:

60. Վճարող կազմակերպությունը վճարումն ավարտելուց հետո 3 օրացուցային օրվա ընթացքում տարածքային կենտրոն է հանձնում լրացված ռեեստրները, փոխադարձ հաշվետվության ակտի՝ համաձայն N 12 ձևի, 5 օրինակ: Հաշվետվության ակտի 2 օրինակը 2 օրվա ընթացքում վերադարձվում են վճարող կազմակերպություն:

61. Տարածքային կենտրոնը յուրաքանչյուր ամսվա վճարումն ավարտելուց հետո 6 օրվա ընթացքում նախարարություն, համապատասխան մարզպետարան կամ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ կամ Գյումրու կամ Վանաձորի կամ Արարատի կամ Ջերմուկի քաղաքային համայնքների ղեկավարների աշխատակազմ է ներկայացնում փոխադարձ հաշվետվության ակտի մեկ օրինակը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Ձև N 1

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N
ՆՊԱՍՏԸ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի _____ ընտանիքին
(անունը, հայրանունը, ազգանունը)

բնակության վայրը _____
մինչև 18 տարեկան անդամները _____, սոցիալական անձնագիր N _____,
անապահովության միավորը _____
նշանակել նպաստ՝ վճարելով _____ դրամ:
Վճարել՝ սկսած ____ _____ 20 թ-ից:
Հաշվարկը կատարեց
_____ _____
(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

Սոցիալական ծառայություններ
տրամադրող տարածքային
մարմնի ղեկավար _____ _____
(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Կ. Տ.

Ձև N 2

_____ սոցիալական ծառայությունների տարածքային մարմին

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N
ՆՊԱՍՏԻ ՎՃԱՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի _____ ընտանիքին
(անունը, հայրանունը, ազգանունը)

սոցիալական անձագրի N ___ , միավորը ___ , մինչև 18 տարեկան անձանց թիվը _____
դադարեցնել նպաստի վճարումը, քանի որ ընտանիքի անապահովության միավորը կազմում է _____:

Սպասարկող աշխատող _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի ղեկավար _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Կ. Տ.

Ձև N 3

_____ սոցիալական ծառայությունների տարածքային մարմին

Վ Ե Ր Ա Հ Ա Շ Վ Ա Ր Կ Ի Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N

Քաղաքացի _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

Ընտանիքի
Սոցիալական անձնագրի N _____ , բնակության վայրը _____
_____
միավորը՝ __ , մինչև 18 տարեկան անձանց թիվը ____ , _____
(վճարման ենթակա գումարը, ամիսները)

_____
կտրման գիծ

_____ վճարող կազմակերպություն

Սոցիալական ծառայությունների _____ տարածքային մարմին

Վ Ե Ր Ա Հ Ա Շ Վ Ա Ր Կ Ի Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N

Քաղաքացի _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

ընտանիքի
Սոցիալական անձնագրի N _____ , բնակության վայրը _____
_____-_____
միավորը՝ _____ , մինչև 18 տարեկան անձանց թիվը _____ , _____
(վճարման ենթակա գումարը)

_____
(ամսվա վճարման ցուցակի էջի համարը և ցուցակում հերթական համարը)

Վճարել _____ ամիսների համար վերահաշվարկված
(ամիսների անվանումները)

գումարը՝ ընդամենը _____ դրամի չափով:

Աշխատող _____ ____ _____ 20 թ.
(անունը, ազգանունը)

Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի ղեկավար _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ. Տ.

Ստացա _____ , _____ _____
(գումարը) (քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը) (անձնագրի համարը)

Վճարեց _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

_____
կտրման գիծ

Վերադարձվում է _____ տարածքային կենտրոնին

Վ Ե Ր Ա Հ Ա Շ Վ Ա Ր Կ Ի Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N

Սոցիալական անձնագրի N _____ ,
_____
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____
(ամսվա վճարման ցուցակի էջի համարը և ցուցակում հերթական համարը)

Վճարված գումարը _____ , _____ ամիսների համար
(ամիսների անվանումները)

Վճարող կազմակերպության աշխատող _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Կ. Տ.

145.2k.voroshum

Ձև N 4

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Սոցիալական ծառայություններ տրամադրող _____ տարածքային մարմնի կողմից 20 թ. _____ ամսվա ընտանիքի չստացած նպաստի գումարի վերականգնման և հրատապ օգնություն նշանակելու մասին

NN ը/կ		Նպաստի և եռամսյակային հրատապ օգնության վերականգնվող գումարը				
		նպաստը		եռամսյակային հրատապ օգնությունը		ընդամենը՝ գումարի չափը
		ընտանիքի թիվը	գումարի չափը	ընտանիքի թիվը	գումարի չափը	
1.	Տարածքային մարմնի սխալը					
2.	Նպաստի գործի տեղափոխությունը					
3.	Դատարանի որոշումը					
4.	Համակարգի աշխատողի մեղքը					
5.	Հարգելի պատճառով չստացած					
6.	Միայնակ կենսաթոշակառուի մահ					
7.	Երեխայի ծննդյան միանվագ հրատապ օգնություն					
8.	Երեխայի առաջին դասարան ընդունվելու միանվագ հրատապ օգնություն					
9.	Ընտանիքի անդամի մահվան դեպքում միանվագ հրատապ օգնություն					
10.	Տարածքային մարմնի կողմից վերականգնված, այդ թվում (11+...+20)					
11.	«ՈՉ» (բարեկեցիկ)					
12.	«01» (նպաստի կամ օգնություն ստանալու իրավունքից զրկված)					
13.	«02» (ավտոմեքենա)					
14.	«03» (անհատ ձեռնարկատեր)					
15.	«04» (կամավոր հրաժարված)					
16.	«05» (էլեկտրաէներգիա)					
17.	«06» (մաքսային)					
18.	«08» (առևտրային կազմակերպության հիմնադիր)					
19.	«09» (հեռախոս)					
20.	«Կ» (անշարժ գույք)					
21.	Ընդամենը (1+...+10)					

Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի ղեկավար _____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

Կ.Տ. ___ _____ 20 թ.

Նախարարության աշխատող _____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը) ___ _____ 20 թ.

Գնահատման համակարգի տեղեկատվական բազան շահագործող կազմակերպության աշխատող _____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը) ___ _____ 20 թ.

145.2k.voroshum

Ձև N 5

Սոցիալական ծառայություններ տրամադրող
_____ տարածքային մարմին

Դ Ի Մ ՈՒ Մ

Քաղաքացի_____
(անունը, հայրանունը, ազգանունը)

Սոցիալական անձնագրի համարը _____

Ունեմ նպաստի իրավունք, խնդրում եմ նշանակել միանվագ հրատապ օգնություն (կատարել «∨» նշում)

1. երեխայի ծննդյան ☐

2. երեխայի առաջին դասարան ընդունվելու ☐

3. ընտանիքի անդամի մահվան կապակցությամբ ☐

Ներկայացնում եմ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող հետևյալ փաստաթղթերը (կատարել «∨» նշում)

1. երեխայի (երեխաների) ծննդյան վկայականի լուսապատճենը ☐
2. 4 շաբաթվա ընթացքում մահացած երեխայի համար՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի տված ծննդի պետական գրանցման փաստը հաստատելու մասին փաստաթղթի լուսապատճենը ☐
3. երեխայի առաջին դասարան ընդունվելու մասին տեղեկանքը ☐
4. ընտանիքի անդամի մահվան վկայականի լուսապատճենը ☐
5. տեղեկանք հուղարկավորությունը կազմակերպելու մասին ☐

Ընդամենը ---------- էջ:
էջերի քանակը

Դիմող _____, _____ _____20 թ.
ստորագրությունը

Ընդունեցի դիմումը և փաստաթղթերը _____
սպասարկող մասնագետի անունը, ազգանունը, ստորագրությունը

_____ _____20 թ.

Սոցիալական ծառայություններ տրամադրող
_____ տարածքային մարմին

Դ Ի Մ ՈՒ Մ

Քաղաքացի_____
(անունը, հայրանունը, ազգանունը)

Սոցիալական անձնագրի համարը _____

Խնդրում եմ իմ ընտանիքին նշանակել եռամսյակային հրատապ օգնություն 20 թ.-ի _____ եռամսյակի համար:

Դիմող _____, _____ _____20 թ.
ստորագրությունը

Ընդունեցի դիմումը և փաստաթղթերը _____
սպասարկող մասնագետի անունը, ազգանունը, ստորագրությունը

_____ _____20 թ.

ՁԵՎ N 6

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացի _____ ընտանիքին
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____,
(բնակության վայրը)

սոցիալական անձնագիր _____,
(սոցիալական անձնագրի համարը)

ընտանիքի _____ անդամի
(անունը, հայրանունը, ազգանունը)

մահվան կապակցությամբ նշանակել միանվագ հրատապ օգնություն՝ _____ դրամի չափով:
Սպասարկող մասնագետ _____ _____
(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

Տարածքային մարմնի ղեկավար _____ _____
(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

Կ.Տ.

____ _____ _____ 20 թ.

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացի _____ ընտանիքին
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____,
(բնակության վայրը)

սոցիալական անձնագիր _____,
(սոցիալական անձնագրի համարը)

ընտանիքի _____ անդամի
(անունը, հայրանունը, ազգանունը)

ընտանիքում _____ երեխայի՝
(անունը, հայրանունը, ազգանունը)

առաջին դասարան ընդունվելու կապակցությամբ նշանակել միանվագ հրատապ օգնություն՝ _____ դրամի չափով:
Սպասարկող մասնագետ _____ _____
(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

Տարածքային մարմնի ղեկավար _____ _____
(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

Կ.Տ.

____ _____ _____ 20 թ.

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացի _____ ընտանիքին
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____,
(բնակության վայրը)

սոցիալական անձնագիր _____,
(սոցիալական անձնագրի համարը)

ընտանիքի _____ անդամի
(անունը, հայրանունը, ազգանունը)

ընտանիքում_____ երեխայի՝
(անունը, հայրանունը, ազգանունը)

ծննդյան կապակցությամբ նշանակել միանվագ հրատապ օգնություն՝ _____ դրամի չափով:

Սպասարկող մասնագետ _____ _____
(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

Տարածքային մարմնի ղեկավար _____ _____
(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

Կ.Տ.

____ _____ 20 թ.

ՁԵՎ N 7

Ց Ո Ւ Ց Ա Կ

Սոցիալական ծառայությունների _____ տարածքային մարմնի 20__թ. _____ եռամսյակում եռամսյակային հրատապ օգնության համար դիմած ընտանիքների

NN ը/կ	Ազգանունը, անունը, հայրանունը	Սոցիա-լական անձնագրի համարը	Բնակու-թյան վայրը	Փաստագրման ամսաթիվը	Փոստը	Միավորը	Մինչև 18 տարեկան անձանց թիվը	Ընթացիկ գումարը (դրամ)	Սոցիա-լական աջակցու-թյան խորհրդի եզրակա-ցությունը	Ծանոթա-գրություն
1.	Հակոբյան Արամ Կ.	111111	Կուզնեցովի 14/1	17.04.2002 թ.	1	29.25		16000	բավարարել	
2.	Հակոբյան Արամ Պ.	111112	Կուզնեցովի 14/2	26.04.2002 թ.	2	28.23	5	16000	մերժել	

Առաջարկում եմ ընդգրկել ընտանիք՝ դրամ գումարով:

Կարգադրություն N
Ընդգրկել 1 ընտանիք:
Վճարել 16000 դրամ

Խորհրդի նախագահ

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Տարածքային մարմնի ղեկավար

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

___ _____ 20___ թ.

Կ. Տ.

Ձև N 8

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

եռամսյակային հրատապ օգնության նշանակման մասին

Քաղաքացի _____

բնակության վայրը _____

սոցիալական անձնագիրը _____

Կարգադրություն N 20 թ. _____ ամսվա համար վճարել _____ դրամ: Անապահովության միավորը _____ Հաշվարկը կատարեց _____ (ստորագրությունը) Տարածքային մարմնի ղեկավար _____ (ստորագրությունը)	Կարգադրություն N 20 թ. _____ ամսվա համար վճարել _____ դրամ: Անապահովության միավորը _____ Հաշվարկը կատարեց _____ (ստորագրությունը) Տարածքային մարմնի ղեկավար _____ (ստորագրությունը)	Կարգադրություն N 20 թ. _____ ամսվա համար վճարել _____ դրամ: Անապահովության միավորը _____ Հաշվարկը կատարեց _____ (ստորագրությունը) Տարածքային մարմնի ղեկավար _____ (ստորագրությունը)
Կարգադրություն N 20 թ. _____ ամսվա համար վճարել _____ դրամ: Անապահովության միավորը _____ Հաշվարկը կատարեց _____ (ստորագրությունը) Տարածքային մարմնի ղեկավար _____ (ստորագրությունը)	Կարգադրություն N 20 թ. _____ ամսվա համար վճարել _____ դրամ: Անապահովության միավորը _____ Հաշվարկը կատարեց _____ (ստորագրությունը) Տարածքային մարմնի ղեկավար _____ (ստորագրությունը)	Կարգադրություն N 20 թ. _____ ամսվա համար վճարել _____ դրամ: Անապահովության միավորը _____ Հաշվարկը կատարեց _____ (ստորագրությունը) Տարածքային մարմնի ղեկավար _____ (ստորագրությունը)
Կարգադրություն N 20 թ. _____ ամսվա համար վճարել _____ դրամ: Անապահովության միավորը _____ Հաշվարկը կատարեց _____ (ստորագրությունը) Տարածքային մարմնի ղեկավար _____ (ստորագրությունը)	Կարգադրություն N 20 թ. _____ ամսվա համար վճարել _____ դրամ: Անապահովության միավորը _____ Հաշվարկը կատարեց _____ (ստորագրությունը) Տարածքային մարմնի ղեկավար _____ (ստորագրությունը)	Կարգադրություն N 20 թ. _____ ամսվա համար վճարել _____ դրամ: Անապահովության միավորը _____ Հաշվարկը կատարեց _____ (ստորագրությունը) Տարածքային մարմնի ղեկավար _____ (ստորագրությունը)
Կարգադրություն N 20 թ. _____ ամսվա համար վճարել _____ դրամ: Անապահովության միավորը _____ Հաշվարկը կատարեց _____ (ստորագրությունը) Տարածքային մարմնի ղեկավար _____ (ստորագրությունը)	Կարգադրություն N 20 թ. _____ ամսվա համար վճարել _____ դրամ: Անապահովության միավորը _____ Հաշվարկը կատարեց _____ (ստորագրությունը) Տարածքային մարմնի ղեկավար _____ (ստորագրությունը)	Կարգադրություն N 20 թ. _____ ամսվա համար վճարել _____ դրամ: Անապահովության միավորը _____ Հաշվարկը կատարեց _____ (ստորագրությունը) Տարածքային մարմնի ղեկավար _____ (ստորագրությունը)
Կարգադրություն N 20 թ. _____ ամսվա համար վճարել _____ դրամ: Անապահովության միավորը _____ Հաշվարկը կատարեց _____ (ստորագրությունը) Տարածքային մարմնի ղեկավար _____ (ստորագրությունը)	Կարգադրություն N 20 թ. _____ ամսվա համար վճարել _____ դրամ: Անապահովության միավորը _____ Հաշվարկը կատարեց _____ (ստորագրությունը) Տարածքային մարմնի ղեկավար _____ (ստորագրությունը)	Կարգադրություն N 20 թ. _____ ամսվա համար վճարել _____ դրամ: Անապահովության միավորը _____ Հաշվարկը կատարեց _____ (ստորագրությունը) Տարածքային մարմնի ղեկավար _____ (ստորագրությունը)

Ձև N 9

ՑՈՒՑԱԿ

_____ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ _____ ԵՎ ՆԱԽՈՐԴ ԱՄԻՍՆԵՐԻ ՆՊԱՍՏՆԵՐ __._____20 _թ

բնակավայրի
անվանումը

ԸՆՏՄՆԵԿԱՆ (ՍՈՑԻԱԼԱԿԱՆ) ՆՊԱՍՏԻ ՎՃԱՐՄԱՆ

Տարածքային կենտրոն
001 Վճարող/մասնաճյուղ

ԸՆԴԱՄԵՆԸ 4 ԷՋ, ԷՋ 1 001 Վճարող/մասնաճյուղ ԸՆԴԱՄԵՆԸ 4 ԷՋ, ԷՋ 1

Բնակության վայրը		Ազգանունը, անունը, հայրանունը	Հանրային ծառայություն-ների համարանիշը կամ նշում համարանիշ չունենալու մասին	Սոցիալական անձնագրի համարը	Անձնագրի սերիան, համարը	Անցած ամիսների			Հունվար ամսվա				NN ը/կ	Սոցիալա-կան անձնագրի համարը	Անցողիկ գումարը (դրամ)	Հունվար	
շենքը	բնակա-ռանը					գումարը (դրամ)	ստորագրու-թյունը	ստորագրու-թյունը	գումարը (դրամ)	ստորագրու-թյունը	օրը	ստորագրու-թյունը				գումարը (դրամ)	օրը
		Աղաջանյան Անահիտ Ա.		691687		***			16000				1	691687		16000	
		Աղաջանյան Անահիտ Հ.		691798		***			21500				2	691798		21500	
		Աղաջանյան Անահիտ Մ.		852316		***			27000				3	852316		27000	
													4				
													5				
													6				
													7				

Էջում ընդամենը ---- ընտանիք ---------- դրամ

Վերահաշվարկի կարգադրությամբ հետ է պահվել ---------- դրամ

Ընդամենը վճարվել է՝ ընտանիք դրամ

Կ. Տ.

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ _____

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՇԽԱՏՈՂ _____

Ընդ ------ ընտ. ---------- դրամ

Վերահաշվարկի կարգադրությամբ հետ է

պահվել ---------- դրամ

Վճարվել է ընտանիք դրամ

145.2k.voroshum

Ձև N 10

ՑՈՒՑԱԿ

_____ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ _____ ԵՎ ՆԱԽՈՐԴ ԱՄԻՍՆԵՐԻ

ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ __._____20 _թ

բնակավայրի
անվանումը

ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ

Տարածքային կենտրոն
001 Վճարող/մասնաճյուղ

ԸՆԴԱՄԵՆԸ 4 ԷՋ, ԷՋ 1 001 Վճարող/մասնաճյուղ

Բնակության վայրը		Ազգանունը, անունը, հայրանունը	Հանրային ծառայություն-ների համարանիշը կամ նշում համարանիշ չունենալու մասին	Սոցիալա-կան անձնագրի համարը	Անձնագրի սերիան, համարը	Անցած ամիսների			Հունվար ամսվա			
շենքը	բնակա-ռանը					գումարը (դրամ)	ստորագրու-թյունը	ստորագրու-թյունը	գումարը (դրամ)	ստորագրու-թյունը	օրը	ստորագրու-թյունը
		Աղաջանյան Անահիտ Ա.		691687		***			16000			
		Աղաջանյան Անահիտ Հ.		691798		***			16000			
		Աղաջանյան Անահիտ Մ.		852316		***			16000			

***

NN ը/կ	Սոցիալա-կան անձնագրի համարը	Անցողիկ գումարը (դրամ)	Հունվար	
			գումարը (դրամ)	օրը
1	691687		16000	
2	691798		16000	
3	852316		16000	
4				
5				
6				
7				

***

ԸՆԴԱՄԵՆԸ 4 ԷՋ, ԷՋ 1

Էջում ընդամենը ----- ընտանիք ---------- դրամ

Վերահաշվարկի կարգադրությամբ հետ է պահվել ---------- դրամ

Ընդամենը վճարվել է՝ ընտանիք դրամ

Կ. Տ.

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ _____

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՇԽԱՏՈՂ _____

Ընդ ------- ընտ. ---------- դրամ

Վերահաշվարկի կարգադրությամբ հետ է

պահվել ---------- դրամ

Վճարվել է՝ ընտանիք դրամ

145.2k.voroshum

Ձև N 11

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Օրինակ ԴԻԼԻՋԱՆԻ Տարածքային կետրոն
22.01.2014 թ.

Վճարող կազմակերպություն թիվ 255
Վճարման ցուցակ Անցողիկ և Հունվար
Գործերի քանակը 196
Երեխաների թիվը 278
Էջերի քանակը 10
Անցողիկ գումարը
ՀՈՒՆՎԱՐ 5226000

Էջի N	Գործերի քանակը	Երեխաների թիվը	Անցողիկ	ՀՈՒՆՎԱՐ
1	20	32		537000
2	18	24		521500
3	19	26		522000
4	20	24		510000
5	20	28		535500
6	21	27		524000
7	20	23		498000
8	20	34		548000
9	18	32		525000
10	20	28		505000

Հանձնեցի
Տարածքային մարմնի ղեկավար
կազմակերպության

_____

Կ. Տ.

_____ _____ 20 թ.

Ընդունեցի
Վճարող

պատասխանատու աշխատող

_____

Կ. Տ.

_____ _____ 20 թ

Ձև N 12

ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱԿՏ

_____վճարող կազմակերպության _____ և սոցիալական ծառայությունների _____ տարածքային մարմնի միջև _____ ամսվա նպաստի և եռամսյակային հրատապ օգնության գումարների փոխհաշվարկի վերաբերյալ

		Ամսաթիվը	Ընտանեկան նպաստը	Սոցիալա-կան նպաստը	Հրատապ օգնությունը	Ընդամենը
պարտք վճարումից առաջ	վճարող կազմակերպությունը տարածքային մարմնին					
	տարածքային մարմինը վճարող կազմակերպությանը					
Ֆինանսավորվել է Այդ թվում.						
1.						
2.						
Ետ գանձում						
Վճարում (սկիզբ-վերջ)						
Այդ թվում.						
1. Ամսվա վերջ						
2. Ամսվա սկիզբ						
Հետ վերադարձ						
պարտք վճարումից հետո	վճարող կազմակեր-պությունը տարածքային մարմնին					
	տարածքային մարմինը վճարող կազմակեր-պությանը					

Պարտքի գումարը նշել բառերով ----------

_____Վճարող կազմակերպության պատասխանատու աշխատող_____

Սոցիալական ծառայություններ տրամադրող _____ տարածքային մարմնի ղեկավար _____

Հաշվապահ_____
Կ.Տ.

Պատասխանատու աշխատող _____
Կ.Տ.

Հավելված N 9
ՀՀ կառավարության 2014 թվականի
հունվարի 30-ի N 145 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՄԻՆՉԵՎ ԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ ՆՊԱՍՏԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ

1. Սույն ակտով կարգավորվում են մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի (այսուհետ՝ նպաստ) նշանակման և վճարման հետ կապված հարաբերությունները:

2. Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինը (այսուհետ՝ տարածքային կենտրոն) նպաստի նշանակման գործերը (այսուհետ՝ նպաստի գործ) պահպանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Նպաստ նշանակելու համար ծնողն իր փաստացի բնակության վայրի տարածքային կենտրոն է ներկայացնում դիմում՝ համաձայն N 1 ձևի:

4. Տարածքային կենտրոնի ղեկավարը դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում առցանց հարցում է կատարում բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական բազա՝ դիմումում հայտարարագրված բնակության վայրի և այնտեղ բնակվող անձանց մասին տվյալների հավաստիությունն ստուգելու նպատակով:

5. Տարածքային կենտրոնի աշխատողը ներկայացված փաստաթղթերը համեմատում է բնօրինակների հետ, լուսապատճենների վրա կատարում է գրառում «իսկականի հետ ճիշտ է» ու ստորագրում, դիմումի վրա նշում ստացման ամսաթիվը, ստորագրում և ընդունում է, ծանոթացնում դիմողին նպաստի նշանակման և վճարման կարգին:

6. Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում տեղակայված տարածքային կենտրոնի դեպքում ներկայացված փաստաթղթերը տեսաներածվում են, և լուսապատճեններ չեն պահանջվում:

7. Տարածքային կենտրոնի աշխատողները չեն կարող ներկայացված փաստաթղթերում ուղղում կատարել, բացառությամբ ակնհայտ սխալներն ու վրիպակները:

8. Նպաստ նշանակելու համար ծնողի դիմումը հաշվառվում է տարածքային կենտրոնի՝ նպաստի համար առանձնացված դիմումների գրանցման մատյանում:

9. Տարածքային կենտրոնի աշխատողը սույն կարգի 4-րդ կետով սահմանված կարգով ստացած տեղեկատվությունը համեմատում է դիմումում ներառված տեղեկատվության հետ և եռօրյա ժամկետում՝

1) դրանց համապատասխանության դեպքում տեղեկանքը տպում և ներկայացնում է տարածքային կենտրոնի ղեկավարին՝ հաստատման, որը հաստատվելուց հետո տեղադրվում է նպաստի գործի մեջ.

2) դրանց անհամապատասխանության դեպքում դիմողին ուղղորդում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության բնակչության տեղական ռեգիստրը վարող տարածքային ստորաբաժանում (այսուհետ՝ բնակչության տեղական ռեգիստր)՝ նրան տրամադրելով խորհրդատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման կարգի մասին:

10. Տարածքային կենտրոնի աշխատողը նպաստի նշանակման համար անհրաժեշտ տվյալներն ստանալուց հետո՝ 1-օրյա ժամկետում տեղեկատվական բազայում ամրագրում է ներկայացված տվյալները, որից հետո ստանում և տպում է կարգադրություն՝ համաձայն N 2 ձևի, որը հաստատում է տարածքային կենտրոնի ղեկավարն ստորագրությամբ և կնիքով: Կազմվում է նպաստի գործ՝ համաձայն N 3 ձևի, որը համարակալված է կենտրոնական տեղեկատվական բազան շահագործող կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից տարածքային կենտրոնին նախօրոք տրամադրված համարների տիրույթից:

11. Նպաստը նշանակելուց հետո՝ 15 օրվա ընթացքում, տարածքային կենտրոնն այդ մասին պաշտոնապես տեղեկացնում է համապատասխան գործատուին՝ համաձայն N 4 ձևի:

12. «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված կարգով մինչև երկու տարեկան երեխաների թվի փոփոխության դեպքում փոխվում է նպաստի չափը համապատասխան հանգամանքների առաջացման հաջորդ ամսվա մեկից:

13. Նպաստի չափի փոփոխության դեպքում տարածքային կենտրոնի աշխատողն ստանում և տպում է նոր կարգադրություն՝ համաձայն N 2 ձևի:

14. Նպաստ ստացողի կողմից նպաստը 3 ամիս անընդմեջ չստանալու դեպքում նրա անունը նպաստի վճարման ցուցակում չի ներառվում:

15. Նպաստ ստացողի անունը նպաստի վճարման ցուցակում չի ներառվում, եթե նա կամ երեխան կրկնակի է հաշվառված նպաստի նշանակման կենտրոնական կամ տեղական տեղեկատվական բազաներում (այսուհետ՝ տեղեկատվական բազա):

16. Սույն կարգի 14-րդ և 15-րդ կետերով սահմանված գործառույթները կատարվում են նպաստի նշանակման և վճարման տեղեկատվական բազայի շահագործման ծրագրի միջոցով:

17. Նպաստի վճարումը դադարեցվում է «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 14-րդ մասով սահմանված դեպքերում՝ համապատասխան հանգամանքն առաջանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

18. Նպաստի իրավունքը դադարելու դեպքում տարածքային կենտրոնի աշխատողը ստանում է դադարեցման կարգադրություն՝ համաձայն N 5 ձևի, տպում է, որը հաստատում է տարածքային կենտրոնի ղեկավարը:

19. Նպաստ ստացողի բնակության վայրը փոխվելու դեպքում իր դիմումի համաձայն նրան երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում է գրավոր տեղեկանք ստացած նպաստի մասին՝ համաձայն N 6 ձևի:

20. Դիմումում նշվում է այն տարածքային կենտրոնի անվանումը և ընտանիքի բնակության վայրը, որտեղ տեղափոխվում է նպաստ ստացողը:

21. Դիմումը՝ բնակության վայրը փոխելու մասին և 19-րդ կետով սահմանված տեղեկանքի պատճենը պահվում են նպաստի պատճենահանված (ընթեռնելի) գործում, իսկ գործի բնօրինակը և տեղափոխման մասին տարածքային կենտրոնի կողմից տրված տեղեկանքը տրամադրվում են նպաստ ստացողին՝ բնակության նոր վայր ներկայացնելու համար:

22. Նոր բնակության վայրում տարածքային կենտրոնի ղեկավարը տեղափոխման մասին տեղեկանքի հիման վրա նպաստ ստացողի դիմումին ընթացք է տալիս սույն կարգի 4-րդ, 6-րդ և 9-րդ կետերի համաձայն: Նպաստ ստացողի համար կազմվում է նպաստի գործ նույն համարով:

23. Նոր բնակության վայրի տարածքային կենտրոնը սույն կարգի 11-րդ կետով սահմանված ձևով տեղեկացնում է համապատասխան գործատուին տվյալ նպաստ

ստացողի բնակության վայրի, ինչպես նաև նպաստ նշանակող տարածքային կենտրոնի գտնվելու վայրի փոփոխության մասին:

24. Նպաստի վճարման ցուցակները կազմում և տպում է կազմակերպությունը՝ տարածքային կենտրոնների տրամադրած ամենամյա տեղեկատվության հիման վրա:

25. Նպաստի վճարումը կատարվում է յուրաքանչյուր ամիս (անհրաժեշտության դեպքում երկու ամիսը միասին), կանխիկ վճարման ցուցակներով՝ համաձայն N 7 ձևի (այսուհետ՝ ցուցակ):

26. Տարածքային կենտրոնը կազմակերպությունից կանխիկ վճարման ցուցակ-ները և տիտղոսաթերթերը (համաձայն N 8 ձևի) ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում հաստատում և հանձնում է «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վճարող կազմակերպություն (այսուհետ՝ կանխիկ վճարող կազմկերպություն): Միաժա-մանակ կանխիկ վճարող կազմակերպությանն է հանձնվում տվյալ ամսվա կանխիկ վճարման ցուցակներում ընդգրկված այն նպաստ ստացողների ցուցակը, որոնց նպաստի վճարումը դադարեցվել է այդ ամիս:

27. Տիտղոսաթերթի գլխամասում նշվում է տարածքային կենտրոնի, կանխիկ վճարող կազմակերպության և բնակավայրի անվանումը, ցուցակը կազմելու ամսաթիվը, վճարման ամիսը, ցուցակում ընդգրկված նպաստ ստացողների և երեխաների թիվը, էջերի քանակը, վճարման ենթակա գումարը:

28. Տիտղոսաթերթի վերջում նշվում են տարածքային կենտրոնի ղեկավարի և վճարող կազմակերպության պատասխանատու աշխատողի տվյալները:

29. Տարածքային կենտրոնում՝ ղեկավարի կողմից կանխիկ վճարման ցուցակների հանձնումը կատարվում է կանխիկ վճարող կազմակերպության լիազորած անձին, որոնք ստորագրում են տիտղոսաթերթի երկու օրինակներում, որոնցից մեկը մնում է տարածքային կենտրոնում, մյուսը՝ վճարող կազմակերպությունում:

30. Կանխիկ վճարման ցուցակների էջերը համարակալվում են:

31. Կանխիկ վճարման ցուցակի յուրաքանչյուր էջի գլխամասում նշվում է տարին, ամիսը, տարածքային կենտրոնի, բնակավայրի անվանումը և վճարող կազմակերպության անվանումը, համարը:

32. Կանխիկ վճարման ցուցակը բաղկացած է վճարման մասից և ռեեստրից:

33. Կանխիկ վճարման ցուցակի յուրաքանչյուր էջի վերջում նշվում է այդ էջում գրանցված նպաստ ստացողների թիվը, վճարման ենթակա նպաստի չվճարված և

փաստացի վճարված գումարների չափերը, կնիքի և տարածքային կենտրոնի ղեկավարի ու տեղեկատվական բազայի վարչական պատասխանատու աշխատողի ստորագրությունների տեղը:

34. Կանխիկ վճարման ցուցակի վերջում նշվում են 33-րդ կետով սահմանված տեղեկությունների ամփոփ տվյալները:

35. Կանխիկ վճարող կազմակերպությունը վճարումն ավարտելուց հետո երեք օրացուցային օրվա ընթացքում տարածքային կենտրոնին է հանձնում լրացված ռեեստրները, փոխադարձ հաշվետվության ակտը 5 օրինակից՝ համաձայն N 9 ձևի: Հաշվետվության ակտի երկու օրինակը հետ է վերադարձվում վճարող կազմակերպությանը երկու օրվա ընթացքում:

36. Տարածքային կենտրոնը յուրաքանչյուր ամսվա վճարման ավարտից հետո 6 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) կամ համապատասխան մարզպետարանի կամ Երևանի քաղաքապետարանի կամ Գյումրու կամ Վանաձորի, Արարատի կամ Ջերմուկի քաղաքային համայնքների ղեկավարների աշխատակազմ է ներկայացնում փոխադարձ հաշվետվության ակտի մեկ օրինակը:

37. Ոչ նպաստառուի մեղքով չստացած նպաստի գումարը վերականգնվում է N 10 ձևի համաձայն մինչև յուրաքանչյուր ամսվա 8-ը նախարարություն ներկայացված տեղեկատվության հիման վրա:

38. Նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչությունում տեղեկատվության ուսումնասիրությունից հետո համապատասխան փոփոխություններ են կատարվում մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի տեղեկատվական բազայում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ